# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## N ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-116
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** **<< 27 >> .<< Հոկտեմբեր >>. 2025թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Չեխ Ավտո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի, հիմք ընդունելով 01.09.2025 թվականին կնքված **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-116** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-116** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **30 000 000** (երեսուն միլիոն) ՀՀ դրամ գումարին ավելացնել **30 000 000** (երեսուն միլիոն) ՀՀ դրամ, որի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի **60 000 000** (վաթսուն միլիոն) ՀՀ դրամ, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ ներքին գործերի նախարարություն** | <<**Չեխ Ավտո**>> **ՍՊԸ** |
| **ք. Երևան, Նալբանդյան 130** | **հասցե՝ Ք.Երևան Արշակունյաց 67/3** |
| **ՀՀ Ֆինանսների նախարարության** | **Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ** |
| **գործառնական վարչություն** | **Հ/Հ 1570012967870200** |
| ***Հ/Հ 900011042471*** | **ՀՎՀՀ 02250353** |
| ***ՀՎՀՀ 02882913*** | **Հեռ: 060 44-20-00** |
| **Հեռ. 010 59-61-52** | **Էլ. Փոստ: info@skoda.am** |
| **Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am** | |
| **_____ Ա. Ֆիդանյան** | **_____ Ա.Սարգսյան** |
| **/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /** | **(ստորագրություն)** |
| **(ստորագրություն)** | |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

*Հավելված N 1*
<< 27 >> .<< Հոկտեմբեր >>. 2025թ.
*ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-116 ծածկագրով գնման պայմանագրի*

**Վճարման ժամանակացույց**

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/25 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | | | | | | | | | | 30 000 000 | 30 000 000 | 30 000 000 | **30 000 000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**գործառնական վարչություն**
*Հ/Հ 900011042471*
*ՀՎՀՀ 02882913*
**Հեռ. 010 59-61-52**
**Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**

**Ա. Ֆիդանյան**
**/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**ԿԱՏԱՐՈՂ**
**<<Չեխ Ավտո>> ՍՊԸ**
**հասցե՝ Ք.Երևան Արշակունյաց 67/3**
**Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ**
**Հ/Հ 1570012967870200**
**ՀՎՀՀ 02250353**
**Հեռ: 060 44-20-00**
**Էլ. Փոստ: info@skoda.am**

**Ա.Սարգսյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**